# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան
համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.Մայիսյան, 1-ին փողոց, տուն 52,
Հեռ. (093) 490666 , mayisyan.armavir@mta.gov.am

N 217
*27 դեկտեմբեր 2019թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Արմավիրի մարզի Մայիսյանի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում 2019 թվականի դեկտեմբերի 27 -ին կայացած համայնքի ավագանու թիվ 12 արտահերթ նիստի թվով 3 որոշումները

Առդիր՝ 45 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 12 արտահերթ նիստի
թիվ 76-Ա որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 27 գ.Մայիսյան

Հավելված
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 12
արտահերթ նիստի թիվ 76-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

17/27.3/29614-19
18.12.19

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ,**
**ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ՊԱՐՈՆ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Մովսիսյան**

Ի պատասխան Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 197 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2019 թ

թիվ 12 արտահերթ նիստի
թիվ 77-Ն որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 17/27.3/29614-19 գրությամբ փորձագիտական եզրակացությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի 2020 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով 43408.0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 43408.0 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30 տոկոսը:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 27 գ.Մայիսյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

| ՀՀ | Եկամուտների անվանումը | 2018թ փաստացի | 2019 հաստատված | 2020թ կանխատեսված |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվողիողի հարկ | 7381.0 | 7892.0 | 7907.2 |
| 2 | Գույքահարկ համայնքի վարչական տարածքի գտնվողշենքերի և շինությունների համար | 2653.9 | 2747.0 | 2731.0 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 4601.9 | 3966.0 | 4044.3 |
| 4 | Համայնքի տարածքում ոգելիցխմիչքներին ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | 74.4 | 74.3 | 74.4 |
| 5 | Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համր | 150.0 | 200.0 | 200.0 |
| 6 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաններ | 27731.7 | 27731.7 | 27731.7 |
| 7 | Համայնքի սեփականություն համարվող վարձավճարներ | 64.4 | 230.0 | 219.4 |
| 8 | /աղբաթափությանվճար/ | 17.4 | 500.0 | 500.0 |
| Ընդամենը՝ | | 42694.7 | 43341.0 | 43408.0 |

Համայնքի բյուջեի ծախսերի համեմատական վերլուծությունը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| ՀՀ | Ծախսերի անվանումը | 2018թ փաստացի | 2019թ հաստատված | 2020 կանխատեսված |
|---|---|---|---|---|
| 1 | Օրենսդիրև գործադիր մարմիններ , պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 19786.3 | 22491.0 | 22800.0 |
| 2 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 3900.0 | 4000.0 | 4000.0 |
| 3 | Մշակույթի տների ակումբներ, | 1834.8 | 2350.0 | 2700.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կենտրոններ | | | |
| 4 | Ոռոգման ջրագծերի կապիտալ նորոգում | 0.0 | 0 | 0 |
| 5 | Գրադարաններ | 1782.8 | 2050.0 | 2430.0 |
| 6 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, այլ դասերի չպատկանող | 4831.8 | 6850.0 | 5640.0 |
| 7 | Այլ մշակութային կազմակերպություններ | 850.0 | 900.0 | 900.0 |
| 8 | Լուսավորություն | 6450.0 | 950.0 | 0 |
| 9 | ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 163.2 | 200.0 | 200.0 |
| 10 | Ճանապարհների վերանորոգում | 255.0 | 950.0 | 0 |
| 11 | աղբահանում | 1500.0 | 1500,0 | 1500,0 |
| 12 | պահուստային ֆոնդ | 0.0 | 3000.0 | 3038.0 |
| | | | | |
| Ընդամենը՝ | | 41353.9 | 46948.9 | 43408.0 |

Համայնքի բյուջեի ծախսերի՝ համեմատական վերլուծությունը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

հազար դրամ

| N | Անվանումը | հոդված | 2018թ. փաստացի | 2019թ. հաստատված | 2020թ. նախատեսվող |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 19451.6 | 20240.0 | 22080.0 |
| 2 | Պարգևատրում | 4112 | 615.0 | 560.0 | 943.0 |
| 3 | Էներգետիկ ծառայություն | 4212 | 1045.5 | 1800.0 | 1800.0 |
| 4 | Կոմունալ ծառայություն | 4213 | 1582.5 | 1750.0 | 1750.0 |
| 5 | Կապի Ծառայություն | 4214 | 115.2 | 150 | 150.0 |
| 6 | Ապահովագրական ծախսեր | 4215 | 30.0 | 50.0 | 50.0 |
| 7 | Ներքին գործուղումներ | 4221 | 264.0 | 300.0 | 250.0 |
| 8 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 163.2. | 300.0 | 300.0 |
| 9 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 135.4 | 400.0 | 300.0 |
| 10 | Այլ Տրանսպորտային ծառայություններ | 4229 | 800.0 | 800.0 | 800.0 |
| 11 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 518.0 | 2351.0 | 1840.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 0.0 | 0 | 0 |
| 13 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 1394.0. | 1800.0 | 1187.0 |
| 14 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 0 | 0 | 200.0 |
| 15 | Մեքենաների և սարք. ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 417.0 | 500.0 | 500.0 |
| 16 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 264.2 | 600.0 | 430.0 |
| 17 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 792.2 | 2100.0 | 990.0 |
| 18 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 0.0 | 0 | 0 |
| 19 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 704.1 | 1600.0 | 2100.0 |
| 20 | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 1400.0 | 1400.0 | 0 |
| 21 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 3900.0 | 4000.0 | 4000.0 |
| 22 | Նվիրատվություն | 4819 | 59.4 | 200.0 | 200.0 |
| 23 | Պարտադիր վճարներ | 4823 | 47.5 | 150.0 | 100.0 |
| 24 | Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում | 4841 | 0.0 | 400.0 | 400.0 |
| 25 | Պահուստային միջոցներ | 4891 | 0.0 | 3000.0 | 3038.0 |
| 26 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 255.0 | 0 | 0 |
| 27 | Շենք շինությունների կառուցում | 5112 | 6450.0 | - | 0 |
| 28 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 0 | - | 0 |
| 29 | Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 950.0 | - | 0 |
| 30 | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 0 | - | 0 |
| 31 | Հողի իրացումից մուտքեր | 8411 | | - | 0 |
| | Ընդամենը | | 42353.9 | 43341.0 | 43408.0 |

**Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդի կամ դեֆիցիտի (պակասուրդի) բաշխման ուղղությունների համեմատական վերլուծություն**

| N | Անվանումը | 2018թ. | 2019թ. | 2020թ. |
|---|---|---|---|---|
| | | փաստացի | հաստատված | նախատեսվող |
| 1 | Համայնքի վարչական բյուջեիմիջոց. տարեսկզբի ազատ մնացորդ | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 | Համայնքի ֆոնդային բյուջեիմիջոց. տարեսկզբի ազատ մնացորդ | 15779.6 | 0 | 0.0 |
| | Ընդամենը | 15779.6 | 0 | 0.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 12 արտահերթ նիստի
թիվ 78-Ն որոշում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, համապատասխանում է ՀՀ կառավարության 26.05.2016 թվականի թիվ 550-Ն որոշման 3-րդ կետով սահմանված չափորոշիչներին , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ռուզաննա Ռաֆիկի Մկրտչյանի դիմումը

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի սեփականություն հանդիսացող 04-043-0485-0061 ծածկագրի տակ գտնվող 0.2776 հա /որից 0.2 հա արոտավայր է , 0.0776 հա վարելահող է / գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր և վարելահող գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքի կարգով 134146 /հարյուր երեսուն չորս հազար հարյուր քառասունվեց / ՀՀ դրամ արժեքով, որը հողամասի կադաստրային արժեքն է վաճառել Ռուզաննա Ռաֆիկի Մկրտչյանին:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ղեկավար՝ Եսայի Մովսիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող 10-րդ օրը:

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 27 գ.Մայիսյան

Ն